

**ԲԱՐՍԵՂ ՄԱՐԳԻՍՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՄԻ ՀՈՂՎԱԾԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
Դոկուխանյան Ռ. Վ.**

Բարսեղ Մարգիսյանը (1852-1921թթ.) Վենետիկի Միխիթարյան միաբանության նշանավոր դեմքերից է, որից մեզ է հասել հայագիտական, բանասիրական հարուստ ժառանգություն: Հայագիտության այս երախտավորը «Բազմավեպ» հանդեսում հաճախ հանդես է եկել նաև մանկավարժական ու կրթիչ արժեք ունեցող այնպիսի հոդվածներով, որոնք այսօր էլ արդիական են ու ելակետային:

Այդ հոդվածներից մեկը լույս է տեսել 1890-ին «Բազմավեպի» հունվար և փետրվար ամիսներին:

Բ. Մարգիսյանի հոդվածի դրույթները ոչ միայն չեն հնացել, այլև շարունակում են մնալ արդիական, որովհետև պատմական Մեծ Հայքը և Կիլիկյան Հայաստանը պահպանում են իրենց օրինական տերերի կառույցների հետքերը, որոնք համարվում են համընդհանուր մարդկային ժառանգություն և դրանց օրինական տերը պետք է համարվի այսօրվա անկախ պետականություն ունեցող հայ ժողովուրդը:

**Բանալի բառեր.** Բ. Մարգիսյան, «Բազմավեպ», պատմություն, անցյալ, ներկա, ապագա, հնագիտություն, պատմիչներ, ճշգրիտ, Արմավիր:

Բարսեղ Մարգիսյանը (1852-1921թթ.) Վենետիկի Միխիթարյան միաբանության նշանավոր դեմքերից է, որից մեզ է հասել հայագիտական, բանասիրական հարուստ ժառանգություն: Հայագիտության այս երախտավորը «Բազմավեպ» հանդեսում հաճախ հանդես է եկել նաև մանկավարժական ու կրթիչ արժեք ունեցող այնպիսի հոդվածներով, որոնք այսօր էլ արդիական են ու ելակետային:

Այդ հոդվածներից մեկը լույս է տեսել 1890-ին «Բազմավեպի» հունվար և փետրվար ամիսներին [2, 3]:

Հողվածի վերնագիրն է «Անցեալ պատմութեան կրթիչ ազդեցութիւնն եւ նորա ուսումնասիրութեան անհրաժեշտ միջոցներն»:

Բ. Սարգիսյանն իր հողվածը գրել է 1889 թվականի «Մշակ» պարբերականի (թիվ 81) մի հրապարակման առիթով, որում հեղինակը խիստ կարևորել է հայ պատմական անցյալի ճշգրիտ ուսումնասիրությունը. այն կրթիչ ազդեցություն կարող է ունենալ ներկայի վրա: «Մշակի» հողվածագիրը դրել է հետևյալ հարցադրումը. «Արդյոք ունի՞նք մի այնպիսի անցյալ, որ մաքրված լինելով հնության փոշիներից և հանված լինելով պատմական վարագույրի ետևից, կարողանա մատչելի լինել և կրթիչ ներգործություն ունենալ այն ժողովրդյան վերա, որը ձգտում է յուր անցյալի ուսումնասիրությանը [2-4]: Սրան ի պատասխան՝ նա ինքն իրեն փաստում է. «Ո՛չ, անցյալ պատմական կյանքի մի այդպիսի ուսումնասիրություն մենք չունինք» [2-4]:

«Մշակի» հողվածագիրը մասամբ կրկնում է այն դժգոհությունը, որը Ռաֆֆին արտահայտել էր «Դավիթ Բեկ» և «Սամվել» վեպերի առաջաբաններում: Այն է՝ հայ հին պատմիչները չոր ու ցամաք տեղեկություններ են հաղորդել, խոսել են իշխանների ու առանձին անհատների մասին:

«Մշակի» նմանօրինակ հարցադրումները կապված են թերթի հիմնադիր-խմբագիր Գրիգոր Արծրունու դեպի գրականությունը ունեցած որոշակի պահանջներից: Դեռևս 1868-ին «Հայկական աշխարհ» ամսագրում լույս տեսած «Երկուսից ո՞րն է լավը» հողվածում Արծրունին շեշտել է գրականության կրթիչ նշանակությունը. «Այժմ մենք կարող ենք պատասխանել այն հարցին, թե ի՞նչ նպատակով են գրվում գրական ստեղծվածները:

Այն նպատակով են գրվում նոքա, որ սովորեցնեն հասարակությանը մտածել և յուր կյանքը քննել, ուրեմն և ձգտել դեպի լավը, դեպի կյանքիս լավանալը, դեպի առաջադիմությունը [2-10-11]:

Բ. Սարգիսյանը «Մշակ»-ի հողվածագրի՝ դեպի հայ հին պատմիչներն ունեցած թերագնահատական հայացքը համարում է հոռետեսական և չափազանցված [5]:

Նա տեղյակ է օտարազգի հայագետների հիացական կարծիքներին՝ Ա. Ժ. Սեն-Մարտեն, Մ. Ֆ. Բրոսսե, Էդ. Դյուլոբրիե, Ֆ. Նև, Ֆր. Կոնիբեր և ուրիշներ, որոնք հայ հին և միջնադարյան պատմագրությունը խիստ արժեքավորել են: Նա վկայակոչում է անգլիացի մեծ բանաստեղծ Բայրոնին, որը հայերի մասին ասել է, թե չկա ազգ մի, որուն

պատմությունը կարենա այնքան առաքինության և չարության օրինակներ ընծայել, ինչպես է պատմությունն հայ ազգին [2-5]:

Հինգերորդ դարում հայերն իրենց պատմիչներով գերազանցում էին «Պարսից նման մեծ և հին ազգի գրականությանը ևս»:

Մարգիսյանի մոտեցումը պատմության նկատմամբ խիստ արդիական է. նա պահանջում է քննադատաբար յուրացնել անցյալը, նրանից քաղել օգտակարը և դասեր առնել սխալներից՝ դրանք չկրկնելու համար: Տեղին է հիշենք, թե ինչ էր ասում Եղիշեն, երբ անխնա ձաղկում էր Վասակ Սյունեցուն, որը սկզբից հայ ապստամբների հետ էր, սակայն վճռական պահին հեռացավ Վարդան Մամիկոնյանից ու ժողովրդից. «Այս հիշատակարանը գրվեց նրա մասին՝ նրա հանցանքները կշտամբելու և նրան մեղադրելու համար, որպեսզի ամեն մարդ, որ լսի և իմանա այս բանը, նգովք կարդա նրա հետևից և նրա գործերին ցանկացող չլինի» [4-283]:

Հայագետը պարտադիր է համարում գրողի և պատմաբանի՝ դեպի հայ ժողովրդի պատմությունն ունեցած քննական հայացքը: Անցյալի պատկերն անհրաժեշտ է ներկայացնել անկողմնակալ ու գիտականորեն ճշգրիտ:

Այս պահանջն ուներ նաև Հովհաննես Թումանյանը, որը գրեց Հովհաննես Հովհաննիսյանի «Իմ հայրենիքը տեսն՞լ ես, ասա՛» բանաստեղծության «Parodia»-ն:

#### **Հովհաննես Հովհաննիսյան**

Տեսն՞լ ես գյուղը հովտի մեջ մենակ  
Եվ շուրջը փռված շքեղ պարտեզներ,  
Եվ ոսկի հասկեր և խաղաղ վըտակ, -  
Լըսե՞լ ես քաղցրիկ արտուտի երգեր:[7-18]

#### **Հովհաննես Թումանյան**

Տեսն՞լ ես գյուղը հովտի մեջ մենակ  
Ու շուրջը փռված հին աղբակույտեր.  
Տեսն՞լ ես ո՛նց են այնտեղ շարունակ  
Կըրվում, կեղեքում քյոխվեն ու տերտեր: [5-270]

Հայագետը փաստում է, թե մեր պատմաբաններն ու գրողները երբեմն հայ հին կյանքի ճշգրիտ պատմությունը չգիտեն և այդ գործը թողնում են օտարներին, որոնք երբեմն անխնա քննադատում են: Այս դրույթը խիստ այժմեական է, որովհետև թուրք-ադրբեջանական

պատմագրությունը լիովին նենգափոխում է Հայաստանի պատմական անցյալը՝ յուրացնելով մեր պապենական տարածքները, մատենագրությունը, մշակութային արժեքները կամ անխնա ոչնչացնելով դեռ պահպանված հուշարձանները: Եթե որևէ մեկը փաստերով գիտի իր ժողովրդի անցյալը, ապա նա ժամանակի պահանջի համեմատ իր ազգին կտանի դեպի առաջխաղացում. սա է Սարգիսյանի պահանջը:

Բանասերի, պատմաբանի, ուսուցչի համար պարտադիր է բազում աղբյուրներ հետազոտելը, քննելը, ճիշտը կեղծիքից տարբերակելը: Այդ պահանջը Ոսկեդարում առաջադրել է պատմահայր Մովսես Խորենացին, որին օտարները հանիրավի տեղափոխում են ավելի ուշ՝ VI(Զ), VII(Է) և VIII(Ը) դարեր:

Բ. Սարգիսյանը խիստ կարևորում է գիտական հանդեսների առկայությունը և նրանց կանոնավոր հրատարակելը:

Շատ ազգային գրագետներ ողբում են, թե մենք չունենք եվրոպական մատենադարանների ճոխ գրչագիր հարստությունը: Նա բերում է Ղևոնդ Ալիշանի օրինակը, որը, Հայաստանը երբեք չտեսած, հին հեղինակների հաղորդած փաստերով Հայաստան աշխարհը կրում է իր պարթևական ուսերի վրա:

Հին աշխարհի պատմությունը գիտությանը ծանոթ է Հերոդոտոսի, Բերոսոսի, Դիոդորոս Սիկիլացու և ուրիշների գրավոր երկասիրություններով, որոնցում կարևոր փաստեր կան Եգիպտոսի, Ասորեստանի, Մարաստանի և Պարսկաստանի վերաբերյալ: Սակայն դրանք բավարար չեին, ու եվրոպացի հնագետները սկսեցին հնագիտական պեղումները: Դրանց արդյունքներն ապշեցուցիչ էին: Հողի տակից դուրս բերվեցին Թեբեի, Նինվեի, Պերսեպոլիսի ավերակները, վերծանվեցին եգիպտական նշանագրերն ու սեպագիր արձանագրությունները:

Եթե Հերոդոտոսը, որը չէր կարողացել եգիպտական քուրմերի գաղտնիքն իմանալ և չգիտեր նշանագրերը, ապա եվրոպացիներն այսօր կարդում են նրանց նշանագրերը: Նա ակնարկում է այն փաստը, որ Նապոլեոն Բոնապարտի զինվորները եգիպտական արշավանքի ժամանակ գտան մի քար, որի վրա երեք լեզուներով կար նույն արձանագրությունը: Քարի վրա եգիպտական նշանագրերի բնագիրը կար նաև հունարենով: Այդ քարը գիտության մեջ հայտնի է **Ռոզեթա** անունով: Այն գտնվել է 1799-ին Եգիպտոսում, ուղարկվել է Փարիզ, 23 տարի անց ֆրանսիացի բանասեր Ժան Ֆրանսուա Շամպոլիոնը (1790-

1832) հունարենի միջոցով գտել է եգիպտական նշանագրերը ընթերցելու բանալին [9-65-66]:

Բ. Սարգիսյանը խոսում է Եգիպտոսի փարավոններ Ռամզես Առաջինի և նրա որդու՝ Ռամզես Երկրորդի մումիաների մասին: Հայագետը համոզված է, որ քրիստոնյա հայ պատմիչները «կամավոր ջանքով» մոռացության են մատնել հայերի հեթանոսական անցյալի կրոնական և մշակութային արժեքները: Այդ բացը կարող են լրացնել Մեծ Հայքի տարածքում կատարվելիք հնագիտական պեղումները:

Իհարկե, Բ. Սարգիսյանի հոդվածից հետո Խորհրդային Հայաստանի և ներկա Հայաստանի տարածքում հնագիտական պեղումներ կատարվել են, սակայն դրանք բավարար չեն, որովհետև անկախացած Հայաստանի տարածքը կազմում է Մեծ Հայքի միայն մեկ տասներորդ մասը: Այս հույժ կարևոր խնդրի վերաբերյալ մեծարժեք դիտողություն ունեն Աննի և Ժան-Պիեռ Մահեններն իրենց «Հայաստանի պատմությունը (սկզբնավորումից մինչև մեր օրերը)» գրքում: Նրանք գրում են, թե Թուրքիայի ու Իրանի տարածքներում գտնվող հայկական հողի գաղտնիքները, ցավոք, հասանելի չեն հայերին: Սահմանային մասերում նույնպես կան հայկական հուշարձաններ, որոնք ևս հասանելի չեն հայերին [8-12]:

Հայաստանի անցյալը ճիշտ պատկերացնելու գործին մեծ նպաստ կբերեն նաև հայ արքաների մետաղադրամները: Պետք է պարզել՝ ինչո՞ւ Քրիստոսի ծնունդից 2000 տարի առաջ արդեն պետականություն ունեցած Հայաստանի համար ճանաչում են 4 թագավորական գերդաստան: Անհրաժեշտ է ուշադիր կարդալ Մովսես Խորենացու և Հերոդոտոսի ճշգրիտ նկարագրերը Արմավիրի, Արտաշատի, Նախիջևանի և այլ շահաստանների վերաբերյալ:

Հայագետն ահագանգում է, թե իր բարձրացրած հարցը չպետք է հնչի որպես ամայի ապառաժների քարանձավներում հնչող ձայն, այլ որպես սերմ թող ընկնի պարարտ հողի մեջ: Վիեննայում և Ստոկհոլմում եղած հնագիտական ժողովներում խոսք գնաց Այրարատում գտնված մի քանի սեպագրերի մասին և ուրիշ ոչինչ:

Հայաստանի պատմական անցյալը ճշմարտացի ներկայացնելու համար անհրաժեշտ է ունենալ ձեռնահաս իշխանություն, կրթված և վաստակասեր հասարակություն: Նա ցավով նշում է, թե 1890-ին հայերը չունի պետականություն, սակայն ունեն հարուստ վաճառականներ, որոնց միջոցներով կարելի է հրավիրել Շլիմանի նման երևելի հնագետների ուշադրությունը դեպի Հայաստանի հարուստ անցյալը:

Հայ մտավորականները մտածեցին բացել ազգային հնությունների թանգարաններ Էջմիածնում կամ Թիֆլիսում: Սակայն այդ մտածումները կյանքի չկոչվեցին:

Պլուտարքոսը վկայում է, թե հայոց արքա Արտավազը ուսումնասեր էր և հունարենով ողբերգություններ էր շարադրում: Մովսես Խորենացին, Ագաթանգեղոսը, Զենոբը, Փավստոսը, Կորյունը սքանչացած պատմում են Արշակունի թագավորների աշխարհաշինության, անդրիագործության, հաղթական արձանագրությունների և ուրիշ շատ բաների մասին [3-56]:

Բ. Սարգիսյանը հիշատակում է Պերսեպոլիսի մեջ գտնված Դարեհ Վշտասայանի այն արձանագրությունը, որը հայտնի է որպես Բեհիստունի արձանագրություն, և նրանում առկա է Արմենիան՝ Հայաստանը՝ իբրև պետություն [3-57]:

Հիրավի, լիովին հասկանալի է Միսիթարյան միաբանության նվիրյալ կրոնավորի մտահոգությունը: Նա իր հոդվածն ավարտում է Շլիմանի հայտնագործության փաստով: Եթե Հոմերոսը բանաստեղծորեն նկարագրեց Տրոյան, որը Քրիստոսից տասը դար առաջ կործանվեց, և քսան մետր հողի տակ թաղված Տրոյան Շլիմանը գտավ Քրիստոսից 19 դար հետո, մի՞թե սա չի ահագանգում հայերին, որ անհրաժեշտ է պեղել հին Հյաստանի մայրաքաղաք Արմավիրը, որը Պտղոմեոսը հիշատակում է իբրև նշանավոր քաղաք [3-57]: Նա իր հոդվածն ավարտում է հուզական դիմումով՝ ասելով. «Արմավի'ր, եկ արտաքս, ել կանգնե և պատմե մեզ քու և մեր անցյալն» [3-57]:

Հայագետի նպատակը գիտական ուղղվածություն ունի. հարկավոր է պարզել ազգային անցյալը՝ ներկյան ու ապագան զարգացնելու համար:

Այսօր, իհակե, Արմավիր քաղաքի ավերակներն ուսումնասիրված են: Արմավիրը Հայաստանի առաջին մայրաքաղաքն է, այն հիմնադրել է Արարատյան թագավորության հիմնադիր Արամայիսը: Մ.թ.ա. IV-IIIդդ. եղել է Երվանդունիների մայրաքաղաքը՝ պահպանելով Արմավիր անվանումը: Այն եղել է նաև հայկական պետության հեթանոսական պաշտամունքի գլխավոր կենտրոնը: Հին Արմավիրից գտածոներ կան Հայաստանի պետական ազգային թանգարանում [6-234]:

Բ. Սարգիսյանի հոդվածի դրույթները ոչ միայն չեն հնացել, այլև շարունակում են մնալ արդիական, որովհետև պատմական Մեծ Հայքը և Կիլիկյան Հայաստանը պահպանում են իրենց օրինական տերերի կառույցների հետքերը, որոնք համարվում են համընդհանուր

մարդկային ժառանգություն և դրանց օրինական տերը պետք է համարվի  
աշուրվա անկախ պետականություն ունեցող հայ ժողովուրդը:

## СОВРЕМЕННОЕ ЗНАЧЕНИЕ ОДНОЙ ПЕДАГОГИЧЕСКОЙ СТАТЬИ БАРСЕГА САРГИСЯНА

Долуханян Р. В.

Барсег Саргисян (1852-1921г.г.) является одним из известных представителей Конгрегации Мхитаристов Венеции, оставивший богатое арменоведческое и филологическое наследие. Этот выдающийся арменовед часто выступал в журнале “Базмавеп” с имеющими педагогическую и воспитательную ценность статьями, которые и по сей день современны и имеют направляющее значение.

Одна из таких статей была напечатана в “Базмавепе” в январе и феврале 1890 г.

Положения статьи Б. Саргисяна не только не устарели, но и продолжают оставаться современными, поскольку историческая Великая Армения и Киликийская Армения сохранили следы построек их законных хозяев; они считаются всеобщим человеческим наследием, и их законным хозяином должен считаться нынешний, имеющий независимую государственность, армянский народ

**Ключевые слова:** Б. Саргисян, “Базмавеп”, история, прошлое, настоящее, будущее, археология, историки, точный, Армавир.

## THE MODERN VALUE OF AN ARTICLE BY BARSEGH SARGISYAN

Dolukhanyan P. V.

Barsegh Sargisyan (1852-1921) is one of the well-known representatives of the Mkhitarist Congregation of Venice; he left a rich Armenological and philological heritage. This outstanding Armenologist often appeared in the Bazmavep magazine with articles that have pedagogical and educational value; they are still contemporary and have a guiding significance.

One such article was published in Bazmavep in January and February 1890.

The theses of B. Sargisyan’s article are not out of date, but they continue to be modern, since the buildings on the territory of historical Great Armenia

and Cilician Armenia preserved traces of their legal landlords. These monuments are considered as universal human inheritance and the Armenian people, having now independent statehood, should be considered as their rightful owner.

**Keywords:** B. Sargisyan, Bazmavap, history, past, present, future, Archaeology, historians, exact, Armavir.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արծրունի Գրիգոր Գրականություն: արվեստ: գեղագիտություն: հողվածների ժողովածու: կազմող և խմբագիր՝ Յակ. Ի. Խաչիկյան: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն: 2009: 557 էջ:
2. «Բազմավեպ»: հատոր ԽԸ: Վենետիկ: Ս. Ղազար: 1890: հունվար: 463 էջ:
3. «Բազմավեպ»: հատոր ԽԸ: Վենետիկ: Ս. Ղազար: 1890: փետրվար: 463 էջ:
4. Եղիշե Վարդանի և Հայոց պատերազմի մասին: Թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինայանի: Երևան: Երևանի համալսարանի հրատարակչություն: 1989: 447 էջ:
5. Թումանյան Հովհ. ԵԼԺ տասը հատորով (Վերախմբավորված հրատարակություն): Հ. I: Երևան: «Բեկոր-Հրատ» տպագրատուն: 2018: 785 էջ:
6. «Հանրագիտական բառարան» 2 հատորով: Հ. 1: Երևան: Հայկական հանրագիտարան հրատարակչություն: 2016: 1119 էջ:
7. Հովհաննիսյան Հովհ.: Երկեր: Միհատորյակ: Երևան: Հայպետհրատ: 1959: 390 էջ:
8. Mahé Annie et Jean-Pierre, Histoire de l'Arménie, des origines à nos jours. Paris, Perrin. 2012. 745 p.
9. Числова А. С. Английский для гуманитариев. Ростов на Дону. Феникс. 1999. 313 с.

### **Տեղեկություններ հեղինակի մասին**

**Ղուլիսանյան Ռ. Վ.** – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հայկական պետական մանկավարժական համալսարան

Էլ. փոստ՝ [arevik.abrahamyan@inbox.ru](mailto:arevik.abrahamyan@inbox.ru)

Տրվել է խմբագրություն 02.10.2019